ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1*
*Հեռ. (0223)2-23-45 հեռ./ֆաքս (060)460145*
*10 սեպտեմբեր 2020 թ. N 1375*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ*
*ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ*
*ՊԱՐՈՆ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ*

*Հարգելի պարոն Ավետիսյան*

*Ձեզ է ներկայացվում Հրազդան համայնքի ղեկավարի կողմից ընդունված 2020 թվականի օգոստոսի 31-ի N 857-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 08-ի N 877 որոշումները:*

*Առդիր՝ 24 էջ:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*Կատարող՝ Ռ. Դանիելյան*
*Հեռ. (060) 460161*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*31 օգոստոսի 2020թվականի N 857*

## *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով 2020 թվականի օգոստոսի 24-ին «Հաբշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «Աշոտ Հակոբյան» ԱՁ-ի կողմից չափագրված շինության հատակագիծը և Շողեր Պետրոսյանի 2020 թվականի օգոստոսի 25-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 238-րդ շենքի թիվ 22 բնակարանի բնակչուհի Շողեր Շվարցի Պետրոսյանի կողմից Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13-րդ փողոց 8/1,8/3,8/4 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 03072019-07-0071, ծածկագիր AAPSCFERJPB9) բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած 70.01 քմ արտաքին մակերեսով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք, շինությունները:*

*2.Սույն որոշման 1-ին կետում օրինական ճանաչված, առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք, շինությունների օրինականացման վճարը սահմանել 238050 (երկու հարյուր երեսունութ հազար հիսուն) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:*

*3.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու*

կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 օգոստոսի 2020թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*01 սեպտեմբերի 2020թվականի N 858*

## *ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական տուրքերի և վճարների մասին օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.«Սի Փի Էս Օիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2,7 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար: Գովազդի տեղադրման հասցեն՝ ք. Հրազդան, Վանատուր թաղամաս, Հայ Ֆիդայիների 39:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*01 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*01 սեպտեմբերի 2020թվականի N 859*

*ԺԱՄԸ 24 00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.«Մի Փի Էս Օիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ ժամը 24 00-ից հետո աշխատելու թույլտվություն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար /գրանցման հասցե՝քաղաք Երևան, Շինարարների 10/1, բնակարան 104, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, Հայ ֆիդայիների 39 /բենզալցակայան՝ հիմնական շինություն/:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* [signature] *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

[stamp]

*01 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*01 սեպտեմբերի 2020թվականի N 860*

## *ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԵՐՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ԵՎ (ԿԱՄ) ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուիհայտըևՀրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-իN167-Նորոշմամբ հաստատված հավելվածը.*

## *<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ</u>՝*

*1.«Մի Փի Էս Օիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ հեղուկ վառելիքի, սեղմված բնական գազերի, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար /գրանցման հասցե՝ քաղաք Երևան, Շինարարների 10/1, բնակարան 104, գործունեության հասցե՝քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, Հայ Ֆիդայիների 39 /բենզալցակայան՝ հիմնական շինություն/:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*01 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*01 սեպտեմբերի 2020թվականի N 861*

*ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Կամո Ալեքսանյանի 2020 թվականի օգոստոսի 31-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 413 տան բնակիչ Կամո Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2610289, տրված՝ 2008 թվականի հուլիսի 23-ին) Հրազդան քաղաքի Միկրոշրջան Դ-1 թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 4-րդ փողոց 28:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*01 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*01 սեպտեմբերի 2020թվականի N 862*

## *ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սուրեն Յազերյանի 2020 թվականի սեպտեմբերի 1-ի դիմումը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Նոյեմբերյան փողոցի թիվ 38 տան բնակիչ Սուրեն Յազերյանին սեփականության իրավունքով պատկանող(սեփականության իրավունքի գրանցման վկայական 1999806, տրված՝ 2005 թվականի նոյեմբերի 30-ին) Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Երևանյան փողոց 51/1:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*01 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*01 սեպտեմբերի 2020թվականի N 863*

### *ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Պատվական Կիրակոսյանի 2020 թվականի օգոստոսի 31-ի դիմումը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 408 տան բնակիչ Պատվական Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2143514, տրված՝ 2006 թվականի մարտի 24-ին) Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում գտնվող կիսակառույց շինությանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Ջրառատ Նորակառույց թաղամաս 653:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*01 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*02 սեպտեմբերի 2020թվականի N 864*

*ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Արամ Աբելյանի 2020 թվականի սեպտեմբերի 2-ի դիմումը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 207 տան բնակիչ Արամ Աբելյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 12082020-07-0150, գաղտնաբառ՝ SLTAJPNFVM2D և N25082020-07-0129, գաղտնաբառ՝ DDDKMAI81DBR/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Զ. Անդրանիկի պողոտա 165/1 և 165 հասցեներում գտնվող միավորված գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զ.Անդրանիկի պողոտա 165, 165/1:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*02 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*02 սեպտեմբերի 2020թվականի N 865*

## *ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն<<Տեղական տուրքերի և վճարների մասին օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Մամիկոն Մարգարյանին տալ 3 (երեք) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2020 թվականի մայիս, հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների համար: Գովազդի տեղադրման հասցեն՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Ջրավար Անդրանիկի թիվ 59:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*02 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*02 սեպտեմբերի 2020թվականի N 866*

## *ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 13-ի N167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Արսեն Պետրոսյանին տալ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 238/22, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց 8/1, /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն/:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*02 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 սեպտեմբերի 2020թվականի N 867*

### *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Արնիկ Կարապետյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը՝ առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների համար:*
*2.Անհատ ձեռնարկատեր Արնիկ Կարապետյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը՝ առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 448, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 1-ին փողոց թիվ 1 առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 100 քառակուսի մետր մակերես/ :*
*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*03 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## ՈՐՈՇՈՒՄ

*03 սեպտեմբերի 2020թվականի N 868*

### ԴԱՎԻԹ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի «ա» ենթակետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 14-ի N 108 որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը և Դավիթ Բադալյանի 2020 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը.*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 17 շենքի թիվ 41 բնակարանի բնակիչ Դավիթ Բադալյանին կառուցապատման իրավունքով տրամադրել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 17/3 հասցեում գտնվող 20.0քմ մակերեսով հողամասը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:*
*2. Հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում:*
*3. Դավիթ Բադալյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:*
*4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*03 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 սեպտեմբերի 2020թվականի N 869*

*ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վահրամ Հակոբյանի 2020 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Երևան քաղաքի Եղ.Թաղևոսյան փողոցի 13/1 շենքի թիվ 13 բնակարանի բնակիչ Վահրամ Հակոբյանին պատկանող (Երևան նոտարական տարածքի նոտարի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 2-ին տրված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, գրանցված գրանցամատյանում N 6843-ով) Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում գտնվող գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Ջրառատ Նորակառույց թաղամաս 677:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* — *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*03 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 սեպտեմբերի 2020թվականի N 870*

*ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վրեժ Ալեքսանյանի 2020 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի 66 շենքի թիվ 16 բնակարանի բնակիչ Վրեժ Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական1690308, տրված՝ 2005 թվականի մարտի 18-ին) Հրազդան քաղաքի Նոյեմբերյան փողոցի թիվ 1 միջնակարգ դպրոցին հարող տարածքում գտնվող ավտոտնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Նոյեմբերյան փողոց 2/6:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*03 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*03 սեպտեմբերի 2020թվականի N 871*

*ԱՎՏՈՏՆԱԿԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Վոլոդյա Աբրահամյանի 2020 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 27 շենքի թիվ 21 բնակարանի բնակիչ Վոլոդյա Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող / սեփականության իրավունքի գրանցման վկայական 2638747, տրված 2011 թվականի նոյեմբերի 29-ին / Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 238 շենքին հարող տարածք N 8 հասցեում գտնվող ավտոտնակի հասցեն փոխել՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 238/8 հասցեով:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*03 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*03 սեպտեմբերի 2020թվականի N 872*

## *ԱՐԹՈՒՐ ԱՐԱՅԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնից ստացված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ա. Բաղալյանի կողմից կատարած ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի 3-րդ փողոցի 12 տան բնակիչ Արթուր Սարգսյանը Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի թիվ 32 շենքի դիմաց, մայթեզրին՝ առևտրի համար ոչ սահմանված վայրում, իր կողմից շահագործվող <<Ֆորդ>> մակնիշի 34 ZF 183 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի խցիկում իրականացրել է բուսական ծագում ունեցող գյուղատնտեսական արտադրանքի՝ մասնավորապես բանջարեղենի և մրգի առևտուր,ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ բուսական ծագումունեցող գյուղատնտեսական արտադրանքի ոչ սահմանված տեղերում առևտուր անելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից քսանապատիկի չափով: Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Արթուր Սարգսյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը:*

*Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ և 162-րդ հոդվածներով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով, և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 3-ի ժամը 11:00-ի նիստի N 16-րդ արձանագրությունը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Արթուր Արայիկի Սարգսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակել տուգանք 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից 15-օրյա ժամկետում հետևյալ հաշվեհամարով՝ 900125001488:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Արայիկի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 սեպտեմբերի 2020թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*04 սեպտեմբերի 2020թվականի N 873*

## *ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 190-Ն որոշմամբ հաստատված հավելվածը և քաղաքի թվով 19/տասնինը/ անապահով բնակիչների դիմումները՝*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Հրազդան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 190-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում «Այլ նպաստներ բյուջեից» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից 206000/երկու հարյուր վեց հազար/ դրամ հատկացնել Հրազդան համայնքի թվով 19 /տասնինը/ անապահով բնակիչների՝ համաձայն հավելվածի:*

*2.Ձանձնարարել ֆինանսական բաժնին կատարելու նշված վճարումը:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*04 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2020թվականի սեպտեմբերի 4-ի
N 873 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

| Հ/Հ | Ազգանուն, անուն | Հասցե | Գումար |
|---|---|---|---|
| 1 | Գալստանյան Հասմիկ | ք.Հրազդան Կենտրոն թաղ. 80/24 | 5000 |
| 2 | Կարապետյան Էդուարդ | ք.Հրազդան, Կենտրոն թաղ. 44/17 | 5000 |
| 3 | Հովակիմյան Փիրուզա | ք.Հրազդան,Կենտրոն թաղ. 30/35 | 6000 |
| 4 | Ասատրյան Լևոն | ք.Հրազդան , Կոստանյան 12 | 10000 |
| 5 | Գալոյան Ռոզա | ք.Հրազդան Միկրոշրջան թաղ. 236/16 | 10000 |
| 6 | Գևորգյան Գուրգեն | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ. 17/6 | 10000 |
| 7 | Շարյան Լարիսա | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ. 31/15 | 10000 |
| 8 | Պողոսյան Մանուշակ | ք.Հրազդան, Կենտրոն թաղ.98/50 | 10000 |
| 9 | Սարգսյան Անգելինա | ք.Հրազդան,Շին.Տրեստի հան.801 սեն. | 10000 |
| 10 | Մարդյան Զարուհի | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.258/20 | 10000 |
| 11 | Դանիելյան Կարինե | ք.Հրազդան, Ջրառատ թաղ.տուն 441 | 10000 |
| 12 | Արզումանյան Լարիսա | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.78/39 | 10000 |
| 13 | Սահակյան Ժենյա | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.60/25 | 10000 |
| 14 | Անտոնյան Լիանա | ք.Հրազդան, Կենտրոն թաղ. 15/27 | 15000 |
| 15 | Գալստյան Քրիստինե | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.57/31 | 15000 |
| 16 | Յարոյան Հենրիկ | ք.Հրազդան, Ջրառատ թաղ.տուն 517 | 15000 |
| 17 | Ղազարյան Ալինա | ք.Հրազդան,Նար-Դոսի փ.76ա | 15000 |
| 18 | Թադևոսյան Անուշ | ք.Հրազդան,Շինարարների փող. 82ա | 15000 |
| 19 | Գրիգորյան Մարիամ | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.34/28 | 15000 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ |  | 206000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 սեպտեմբերի 2020թվականի N 874*

## *ՄԻԱՎՈՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Արա Հարությունյանի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1. Կոտայքի մարզի Լեռնանիստ 5 թաղամասի թիվ 32 տան բնակիչ Արա Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 29062016-07-0005, ծածկագիր՝ 5ZC4BR1WEQWY և N 29062016-07-0024, ծածկագիր՝ KKNEA6VNQPBC/ Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Մյասնիկյան փողոցի թիվ 32 և թիվ 32/1 հասցեներում գտնվող միավորված բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Մյասնիկյան փողոց 32,32/1:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*08 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*08 սեպտեմբերի 2020թվականի N 875*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վահան Այվազյանի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի դիմումը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 352 տան բնակիչ Վահան Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2148005, տրված՝ 2006 թվականի մարտի 3-ին) Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Ջրառատ Նորակառույց թաղամաս 710:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*08 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 սեպտեմբերի 2020թվականի N 876*

*ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ*
*ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական տուրքերի և վճարների մասին օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ</u>՝*

*1.«Հրազդանի Էներգետիկ Կազմակերպություն (Հրազէկ)» բաց բաժնետիրական ընկերությանը տալ 36 (երեսունվեց) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար: Գովազդի տեղադրման հասցեն՝ ք. Հրազդան, Ծաղկաձորի օդակաձև խաչմերուկ:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*08 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 սեպտեմբերի 2020թվականի N 877*

## *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Գարիկ Սիմոնյանին տալ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը՝ երրորդ եռամսյակի համար:*

*2.Անհատ ձեռնարկատեր Գարիկ Սիմոնյանին տալ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը՝ երրորդ եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 204/11, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13 փողոց թիվ 6 առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*08 սեպտեմբերի 2020թ.*
*ք.Հրազդան*